

ՉԱՓԱՀԱՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆ ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Լիանա Դալլաբյան

Ամուսնական պայմանների կամ արգելքների մեջ գլխավորներից մեկը *ամուսնական չափահասությունն*¹ է: Այն ամուսնության կարևոր նախապայմանն է, քանի որ ամուսնացողը պետք է ունենա որոշակի մտավոր և ֆիզիկական հասունություն, գիտակցված միտք, որպեսզի կարողանա ողջ կյանքի համար նման կարևոր որոշում կայացնել: Ամուսնությունը կնոջ և տղամարդու միջև հարատև, ցմահ կենակցություն է, ուստի պետք է ջանալ այն այնպիսի հիմքերի վրա հաստատել, որ հնարավորինս անխախտ պահպանվի այդ նպատակը, և որ ամուսինները հիմնավոր պատճառ չունենան միմյանցից բաժանվելու: Եվ հենց դա է պատճառը, որ այն օրից, երբ ամուսնությունը հաստատվեց, նրա հետ ուրիշ

¹ Հրեաներն ընդունում էին ամուսնական չափահասությունը տղայի համար 13 տարին, աղջկա համար՝ 12-ը: Հույների մեջ նույնպես տարածված էր զավակներին բավական մատաղ հասակում ամուսնացնելու սովորությունը, բայց իրավագետների կարծիքները բաժանվում են հունական օրենքներով սահմանած ամուսնական չափահասության տարիքի մասին: Այսպես, օրինակ՝ աթենական օրենքով ընդհանուր քաղաքացիական չափահասությունը սկսվում էր 20 տարին լրանալուց, ուրեմն, ամուսնական չափահասությունը պիտի սկսվեր ավելի վաղ, մոտավորապես 13-15 տարին լրանալուց: Մակեդոնացիների մեջ, որոնք առավել շատ զբաղվում էին որսորդությամբ, պատանու չափահասությունը սկսվում էր այն օրվանից, երբ նա սպանում էր մի վարազ, իսկ դա կարող էր հեշտությամբ կատարել այն ժամանակի 12-14 տարեկան պատանին: Հռոմեացիների մոտ հնուց սովորություն կար ամուսնական չափահասությունը համարել տղայի համար 14 տարին և աղջկա համար՝ 12-ը: Այս սովորությունը Հուստինիանոս կայսրը հաստատեց իբրև ընդհանուր օրենք: Կաթոլիկ եկեղեցին չի սահմանում որևէ հասակ ամուսնական չափահասության համար: Ամուսնական արտաքին նպատակների մեջ որդեծնությունը համարելով գլխավոր՝ նա թույլ է տալիս ամուսնությունն ըստ ֆիզիկական զարգացման, երբ տղան կամ աղջիկը այնքան զարգացած են մարմնով, որ կարող են ընդունակ լինել ամուսնական հարակցության և որդեծնության (տե՛ս **Վ. Բաստամեանց**, Կանոնագիտական երկեր, Ս. Էջմիածին, 2015, էջ 261-264): Այսպիսով, պարզ է դառնում, որ հրեաների, հույների և հռոմեացիների մոտ ամուսնական չափահասության տարիքը տատանվում էր 12-15 տարեկանի շրջանակներում:

մի քանի գլխավոր նախապայմանների կողքին առաջ եկավ նաև չափահասության պայմանը: Բոլոր ազգերի կրոնական և աշխարհիկ օրենքները հարկավոր էին համարում ամուսնության օրինավորության համար միշտ պահանջել չափահասություն¹:

Նշանադրության, այնուհետև ամուսնության ամենակարևոր պայմանը նաև փոխադարձ համաձայնությունն² էր, թեև նրա կիրառումը կյանքում հաճախ վտանգվում էր: Երբ զավակները տակավին երեխա էին, նրանց կամքն ու հաճությունը ծնողների համար ունեին ձևական նշանակություն³: Երեխաներն իրենք էլ, ըստ ամենայնի, չէին պատկերացնում նշանադրության նպատակը: Ապագա կողակցի ընտրության գործում ծնողները և այլ մերձավորները խաղում էին վճռորոշ դեր: Փոխադարձ համաձայնությամբ նշանադրությունը գործնական արժեք էր ստանում կողմերի համար, երբ կատարվում էր հասունացած շրջանում⁴: Այսինքն՝ ամուսնության համար առաջնային կարևորություն ներկայացնող համաձայնության նախապայմանն անխախտ կերպով կապված է ամուսնական չափահասության հետ, քանի որ այդ հարցում կամքի դրսևորումը պետք է լինի որոշակի գիտակցումով, ինչն էլ հնարավոր է միայն չափահասության պարագայում:

Քրիստոնեության ընդունումից հետո Հայ Առաքելական եկեղեցին բազմաթիվ խնդիրների կողքին քննության է առել նաև ամուսնական չա-

¹ Նշվ. աշխ., էջ 259:

² **Consensus-cinsentio**-համաձայնություն, համաձայնվել (տե՛ս **И. Дворецкий**, Латинско-Русский словарь, Москва, 1976, с. 240):

³ Այն, որ ծնողներն էին որոշում իրենց տղայի ամուսնության հարցը, միանշանակ չէր: Սրա հակառակ փաստումն ենք տեսնում Բենսէի մոտ Հարք զավառի ամուսնահարսանեկան բարքերը նկարագրելիս: Մասնավորապես, նա նշում է մի իրավիճակ, երբ տղան ինքը խիստ վճռական է տրամադրված իր նախընտրած աջկա հետ ամուսնության հարցում. «Երբ Մոսոն իմացաւ, որ իւր տղան ծռած է Կարոյի աղջկա վրայ, և «երկու ոտքը մեկ սօլ դրած» (վճռած է) անպատճառ այդ աղջիկը պիտի առնէ, տղայի հայր և մայրը առանձնանալով կը խորհրդակցին...զէդ աղջիկ կուզէ, ըսեր է՝ օր զիսի իմ պապ չկարգէ, կը թողիմ երթամ Թիֆլիս, Ստանբօլ, աշխարքէ աշխարք. կանհիմ զիմ գլուխ կը կորիմ, իմն օր կայ՝ էդ աղջիկն է, չկայ՝ էդ աղջիկն է, օր էդի չեղնի աստոր չըմ մտնայ» (**Բենսէ**, ԱՀ, N 1, Ընտանեկան բարք և սովորություն, Գիրք Ե, 1899, Թիֆլիս, , էջ 90):

⁴ Տե՛ս **Ս. Հովհաննիսյան**, Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում, Երևան, 1976, էջ 137:

փահասության խնդիրը: Այսպես, Սուրբ Սահակ Պարթևի կարգադրությամբ 426թ. գումարված Վաղարշապատի ժողովի ընդունած կանոններով, որ կոչվում են նաև «Ս. Սահակայ կանոններ», արգելվում է ամուսնությունը մանկական հասակում¹: Մասնավորապես, այս հարցին են վերաբերում ժողովի 27-րդ և 28-րդ կանոնները: 27-րդ կանոնում ասվում է. «... պատվիրե՛ք, որ իրենց անչափահաս որդիներին չպսակեն, առանց միմյանց տեսնելու չնշանեն: Դուք էլ, քահանանե՛ր, անչափահասներին մի պսակեք, մինչև չհասնեն, միմյանց չհավանեն, քննեցե՛ք, տեսեք նշանաձևերը միմյանց ընդունու՛մ են, եթե ծնողների բռնադատությամբ է, մի՛ պսակեք»: Իսկ 28-րդ կանոնն ասում է, որ եթե քահանան անչափահասներին պսակի, պատժի կենթարկվի, և ծնողները ևս պատուհասից չեն ազատվի²: 27-րդ կանոնը վերնագրված է՝ «Վասն տղայոց չաիրնել պսակ», այսինքն, կարելի է եզրակացնել, որ խոսքը վերաբերում է տղաների պսակին, բայց կանոնը բնականաբար տարածվում է նաև աղջիկների վրա:

Ամուսնական չափահասության հարցը, սակայն, ավելի կոնկրետ դրվեց Դվինի Բ ժողովում (554թ.): Մինչ այդ եղած ժողովները այս հարցի վերաբերյալ կամ չեն խոսել, կամ խոսել են բավականին հպանցիկ: Այս ժողովի 24-րդ կանոնում ասվում է, որ անչափահաս տղաներին ոչ ոք իրավունք չունի պսակել, իսկ, առհասարակ, չափահասության դեպքում էլ անպայման ամուսնացողները պետք է իրար տեսնեին ու հավանեին³: Այստեղից հետևություն, որ 6-րդ դարից սկսած եկեղեցին ուշադրություն է հատկացրել ամուսնացողների կամքին:

1166թ. հայոց հայրապետական գահին բազմում է Ս. Ներսես Շնորհալին: Այս շրջանում Կիլիկյան Հայաստանը ենթարկվում էր եվրոպական լուսավորության ազդեցությանը, և Ս. Ներսես Շնորհալին, իբրև սրտացավ հովիվ, տեսնելով հայ ժողովրդի խառնաշփոթ վիճակը, ձեռնամուխ եղավ բարվոքել ու բարեկարգությամբ պայծառեցնել Հայ եկեղեցու և ազգային կյանքի այս դրությունը: Նա հրապարակում է հայրապետա-

¹ Վ. Բաստամեանց, Կանոնագիտական երկեր, էջ 268:

² Տե՛ս Կանոնագիրք Հայոց, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 365, տե՛ս նաև Ն. Վ. Մելիք Թանգյան, Հայոց եկեղեցական իրավունքը, Ա Գիրք, էջ 459:

³ Տե՛ս Ն. Վ. Մելիք Թանգյան, Հայոց եկեղեցական իրավունքը, էջ 336:

կան Ընդհանրական թուղթ, որով առաջարկում է զանազան դարմաններ ազգային հոգևոր և մարմնավոր կյանքի բազմատեսակ վերքերը բուժելու համար՝ չմոռանալով նաև ամուսնական չափահասության հարցը¹:

Ս. Ներսես Շնորհալին «Թուղթ ընդհանրական»-ի² «առ դաս քահանայից» հատվածում խոսելով պսակի մասին՝ հստակ սահմանում է տղաների և աղջիկների համար ամուսնության թույլատրելի տարիքը: Տղաների համար ամուսնության չափահասության տարիք էր համարում 15-ը, իսկ աղջիկների համար՝ 12-ը, որպեսզի ամուսնությունը գիտակցված լինի: Այստեղ խոսքը Շնորհալու կողմից ընդունած 28-րդ կանոնի մասին է³: Այս կանոնը արգելում է նաև ժառանգության համար կամ մեկ այլ պատճառով տղաներին ամուսնացնելը: Այնուհետև՝ խոսվում է բռնի ամուսնությունների մասին, նշելով, որ տղայի կամ աղջկա կամքին հակառակ ամուսնություններ չի կարելի կատարել. այդպիսի պսակը անհաստատ է ու լուծանելի, և պսակադիրը, եթե անգամ ստիպված պսակած լինի, էլի կպատժվի⁴:

Միջնադարյան իրավական մտքի վառ ներկայացուցիչ Մխիթար Գոշը մի քանի դրվագով անդրադարձել է անչափահաս ամուսնությանը, սակայն առանց տարիքային նշումների⁵:

Ուշագրավ են Սսում տեղի ունեցած (1243-1246թթ.) Հայոց եկեղեցական ազգային օրենսդիր ժողովի որոշումները: Ժողովը իրավիրվել է Կոստանդին Ա Բարձրբերդցի կաթողիկոսի նախաձեռնությամբ, ներկա են եղել նաև Հեթում թագավորը և նրա որդին: Ժողովում ընդունվել են

¹ Տե՛ս **Վ. Բաստամեանց**, Կանոնագիտական երկեր, էջ 272-273:

² «Շնորհալու Ընդհանրականը մեր եկեղեցին չի ընդունել իբրև եկեղեցական կանոնադրություն, բայց ... նրա կենդանության ժամանակ դա պիտի պարտավորական գործադրություն ունենար իբրև հայրապետական կոնդակ կամ հրահանգ», տե՛ս **Վ. Բաստամեանց**, Կանոնագիտական երկեր, էջ 274:

³ Տե՛ս **Ն. Վ. Մելիք Թանգյան**, Հայոց եկեղեցական իրավունքը, էջ 71, էջ 509:

⁴ Տե՛ս **Ն. Շնորհալի**, Ընդհանրական Թուղթ Սրբոյն Ներսիսի, Յերուսաղէմ, 1871, էջ 62-64:

⁵ Օրինակ՝ «Դատաստանագրքի» նախադրության 7-րդ մասում ասվում է. «Իսկ հասակ որդէճնութեան հաւատարիմ լիցի ի տուրեառութիւն վաճառաց, զի թէ գանձն եւ զսերմն վաճառել կնոջ եւ գնել զկինն յամուսնութիւն հաւատարիմ է, հաւատարիմ լիցի ի տուրեառս վաճառաց» (տե՛ս **Մխիթար Գոշ**, Գիրք Դատաստանի, Երևան, 1975, էջ 13)

25 կանոններ, որոնցով կրկին անգամ սահմանվում է ամուսնության համար չափահասության տարիքը: Մասնավորապես՝ ժողովի 7-րդ կանոնը տղաների համար հստակ սահմանեց 14, իսկ աղջիկների համար՝ 12 տարին¹: Այսինքն, Ս. Ներսես Շնորհալու կողմից տղաների ամուսնության համար սահմանված թույլատրելի 15 տարեկանը այստեղ փոխարինվեց 14-ով:

13-րդ դարի նշանավոր վարդապետ և մատենագիր Հովհաննես Երզնկացին (Պլուզ) իր «Խրատ բոլոր քրիստոնյաներին» աշխատության մեջ պսակի մասին հատվածում հստակ սահմանում է չափահասության հարմար տարիքը, նշելով, որ երբ կտրիճ պատանին 15 տարեկան է դառնում, փեսացու է, իսկ աղջիկը՝ 14 կամ նվազագույնը 12 տարեկանում հարսնացու է. եթե ուզեն անցավոր աշխարհի կյանքը, կամուսնանան²:

Հայոց եկեղեցական ժողովների շարքում հիշատակության է արժանի նաև 1651թ. Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսի հրավիրած Երուսաղեմի ժողովը³: Այս ժողովի 12-րդ կանոնը վերաբերում է նշանադրության արարողությանը: Կանոնում մասնավորապես ասվում է, որ եթե աղջկան և տղային նշանելու հարց է առաջանում, ապա քահանան միանգամից, այսինքն առանց երկար-բարակ քննության, թող նշան չդնի: Նախապես պետք է համոզվել, որ նշանադրվող զույգը չափահասության տարիքին համապատասխանում է և հետո միայն նշանել⁴:

Հետագա դարերում ևս Հայոց եկեղեցու առաջնորդներն ու հոգևորականները անմասն չեն մնացել այս հարցի վերաբերյալ որոշումներից: Այսպես, օրինակ՝ Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի Ամենայն հայոց կաթողիկոսի 1875թ. հրատարակված պսակի 21-րդ կանոնում նշվում է, որ ամուսնացողները պետք է չափահաս լինեն: Հաջորդ՝ 22-րդ կանոնն էլ վերաբերում է ամուսանցողների առողջությանը: Նշվում է, որ պետք է ուշադրություն դարձնել զույգերի առողջությանը, որպեսզի հետագայում

¹ Մանրամասն տե՛ս **Ն. Վ. Մելիք Թանգյան**, Հայոց եկեղեցական իրավունքը, էջ 71, 394-395:

² Տե՛ս **Հ. Երզնկացի**, Խրատ բոլոր քրիստոնյաներին, Անթիլիաս, 1984, էջ 41:

³ Մանրամասն տե՛ս **Ն. Վ. Մելիք Թանգյան**, Հայոց եկեղեցական իրավունքը, էջ 71, 404, տե՛ս նաև **Առաքել Դավրիժեցի**, Պատմություն, Երևան, 1988, էջ 505:

⁴ **Նշվ.աշխ.**, էջ 71, էջ 408:

այդ խնդիրները տարաբախտության պատճառ չդառնան¹: Այս երկու կանոնը միմյանց փոխկապակցված են, քանի որ առողջությունը որոշակիորեն կապված է նաև չափահասության հետ: Այստեղ խոսքը նաև ֆիզիկական հասունության մասին է, որը պարտադիր պայման է ամուսնության համար:

Ամուսնության չափահասության խնդիրը կամ երևույթն իր արտացոլումն է գտել նաև հայ ժողովրդական սովորույթներում, ուր բավականին շեղումներ կան եկեղեցական կանոններից:

Ե. Լալայանը նշում է, որ Գանձակի գավառում աղջիկներին ավելի վաղ էին ամուսնացնում. 8 տարեկանում աղջիկը նշանվում էր, իսկ արդեն 9 կամ 10 տարեկանում՝ պսակվում: Նա ականատես է եղել 8 տարեկան աղջկա ամուսնության Գետաշենում, երբ երեխային կանգնեցրել են թախտի վրա և նա չի էլ հասկացել, թե ինչ է կատարվում: Աղջիկներին վաղ տարիքում ամուսնացնելու տարածված երևույթը նա բացատրում է նրանով, որ աղքատ ընտանիքները հնարավորինս շուտ «ազատվում էին մի ուտող բերանից», իսկ հարուստ գերդաստանները, աշխատող ձեռքերի կարիք զգալով, շուտ էին ամուսնացնում իրենց տղաներին: Սակայն Ե. Լալայանը նաև նշում է, որ գյուղերի փոքր-ինչ կրթվածներն ավելի ուշ էին պսակում իրենց աղջիկներին: Իհարկե նրանք ևս չէին թողնում, որ աղջկա 14-15 տարին լրանա, քանի որ կար մոտեցում, որ 17-18 տարեկան աղջիկն արդեն «տանը մնացած է»², և միայն այրի տղամարդը կարող է նրան ուզել: Տղաները, սովորաբար ավելի ուշ էին ամուսնանում՝ 21 տարին լրանալուց հետո: Հիմնականում նրանք կատարում էին իրենց զինվորական պարտքը, հետո նոր ամուսնանում³: Ամուսանական այս վաղաժամ տարիքից էլ բխում էր ամուսնացողների կարծիքը հաշվի չառնելու սովորույթը: Ի՞նչ կարծիք կարող է հայտնել 8 տարեկան երեխան ամուսնության վերաբերյալ: Չափահասության պարագայում ծնողներն

¹ Տե՛ս **Ն. Վ. Մելիք Թանգյան**, Հայոց եկեղեցական իրավունքը, էջ 562:

² «Տանը մնացած» աղջիկներին նաև անվանում էին «քացախած», «անբախտ»: Նրանք իրենց ծնողների համար մեծ նախատիք էին համարվում և մեծ հոգս էին պատճառում, տե՛ս **Ե. Լալայան**, Բորչալուի գաւառ, Ամուսնութիւն և հարսանիքի սվորութիւններ / ԱՀ, N 9, Թիֆլիս, 1902, էջ 213:

³ Տե՛ս **Ե. Լալայան**., Գանձակի գաւառ, Ընտանեկան բարք, ամուսնութիւն եւ հարսանիքի սվորութիւններ / ԱՀ, Գիրք 2, Թիֆլիս, 1900, էջ 242-243:

ավելի զգույշ էին, քանի որ զավակները կարող էին ընդդիմանալ:

Վաղ ամուսնությունների վերաբերյալ Ե. Լալայանը նաև նշում է, որ խեղճ երեխաները ամուսնության մասին գաղափար իսկ չունեին, և այդ առումով բերում է շատ բնութագրական օրինակ. «Շահալեցի Եղիսաբեթը, ով պսակվելիս տասը տարեկան է եղել, հարսանքի օրը փախել և թաքնվել է թոնրի մեջ»¹:

Ստ. Լիսիցյանը, Ջանգեզուրի հայերի հարսանեկան սովորույթները նկարագրելիս, նշում է, որ ինչպես Հայաստանի այլ գավառներում, Ջանգեզուրում ևս ամուսնական նոր զույգ կազմելու նախաձեռնությունը բխում էր տղայի ծնողներից: Ամուսնացնում էին շատ մատաղ հասակում՝ աղջիկը լինում էր մոտավորապես 10-12 տարեկան, իսկ տղան՝ 14-15²:

Ամուսնության տարիքային խնդիրը ցայտուն արտացոլված է նաև Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններում: Մասնավորապես, մանկահասակ աղջկա ամուսնության վառ օրինակ կարող ենք համարել «Մարո» պոեմը: Մարոն ընդամենը 9 տարեկան աղջնակ է, երբ տղայի հարազատները նրա հայրական տուն են այցելում կնության առնելու նպատակով՝ պահպանելով ավանդական երկխոսության հետևյալ կանոնները.

«Տաշտներդ լի հաց լինի,
Դուռներդ միշտ բաց լինի,
Հաց չենք ուզում ձեզանից,
Հող տւեք մեզ ձեր տանից»:

Առանց երկար-բարակ մտածելու Մարոյի հայրը բարձրացնում է օղիով լի բաժակը.

«Կամքդ լինի Տէր Աստված»:³

Այստեղ հստակորեն տեսնում ենք, որ հոր կամքն օրենք էր հայ նահապետական ընտանիքում, որն ուներ հայրիշխանական բնույթ:

Բայց հաջորդիվ տեսնում ենք, որ Մարոն փախչում է վաղ ամուսնությունից՝

«Փախավ, եկավ իր հօր տուն:

¹ Ե. Լալայան, Բորչալուի գաւառ, էջ 212:

² Տե՛ս Ս. Լիսիցյան, Ջանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 185:

³ Մ. Տամլամեան, Հայ կինը Թումանեանի բանաստեղծութեան մեջ, Հայ կին, Փարիզ, 1948, մարտ-ապրիլ, էջ 6-7:

Ես սիրում եմ մայրիկին,
Ես չեմ ուզում լինել կին»:

Ինչպես պետք է հակազդեր այդ տգետ միջավայրը Մարոյի փախուստին կարելի է երևակայել միայն.

“Հայրը ծեծեց իր աղջկան.
Դուրս իմ տանից, սեւերես...
Մրտեցիր անունս...»¹:

Այսպիսով՝ ակնհայտ է, թե որքան սահմանափակ ու նեղ հայացքներ են եղել ամուսնական հարաբերությունների նկատմամբ, և թե որքան դաժան կարող էր լինել հայրական պատվախնդրությունը դստեր ամուսնության հարցում, քանի որ, ինչպես գիտենք, պոեմում Մարոն ինքնասպան է լինում: Հենց այս տեսակ վտանգների մասին է խոսքը, երբ մանկահասակ աղջիկներին դեռևս անպատրաստ հոգեվիճակով ստիպում են մտնել հասուն կյանք: Այս օրինակը ևս մեկ անգամ ապացուցում է, որ ամուսնության համար կարևորագույն նախապայմանը չափահասության տարիքն է: Կնոջ իրավունքի այնպիսի ոտնահարումը, ինչպիսին մանկահասակ տարիքի ամուսնությունն է, անթույլատրելի և անընդունելի է քրիստոնեական ընկալմամբ:

Վաղ հասակում ամուսնացած կնոջ օրինակ էր նաև հայդուկապետ Աղբյուր Սերոբի կինը՝ Սոսե մայրիկը, որը 13 տարեկանում ամուսնացել էր Սերոբի հետ և իր ամուսնու աստանդական կյանքի ընթացքում եղել նրա հավատարիմ գործակիցը²:

Մանկահասակ աղջիկներին ամուսնությունը տխուր երևույթ էր հայոց ամուսնական սովորույթներում և Եկեղեցին փորձել է կարգավորել այն՝ խնդիրը վերցնելով իր ուշադրության ներքո, և տարբեր ժամանակաշրջաններում փորձել ժողովրդին զերծ պահել այս տեսակ խնդրահարույց երևույթներից: Պսակադիր քահանան պարտավոր էր մատչանում նշել ամուսնացողների տարիքը: Բայց այնպես էր ստացվում, որ երբեմն հետամնաց գյուղերում մարդիկ նույնիսկ հստակ չէին կարողանում ասել իրենց կամ իրենց երեխայի ծննդյան օրը: Նրանք երեխայի ծնունդը կապում էին մի որևէ անցքի հետ և այդպես էին մոտավոր մտապահում նրա

¹ **Նույն տեղում:**

² Տե՛ս **Ռ. Նահապետյան**, Հայուհու ավանդական կարծրատիպը, Ազգաբանական ուսումնասիրություններ, Գիրք 3, Երևան, 2020, էջ 289:

ծննդյան օրը¹:

Վերջին շրջանում ամուսնական տարիքի վերաբերյալ պատկերացումները բոլորովին այլ են: Հանրապետության սոցիալ - տնտեսական պայմաններն ու ժողովրդի կենսամակակարգակի անկումն իրենց ազդեցությունն են ունեցել ամուսնահարսանեկան համակարգի վրա: Գործազրկության, բնակարան կամ տուն ձեռք բերելու դժվարությունների, աշխատունակ տարիքի տղամարդկանց զանգվածային արտագաղթի պայմաններում ամուսնության, նոր ընտանիք կազմելու խնդիրը դառնում է առավել քան դժվար լուծելի: Երիտասարդը ձգտում է նախքան ամուսնությունը փոքր-ինչ ինքնահաստատվել, որոշակի բարենպաստ պայմաններ ապահովել, որը և ամուսնական տարիքի բարձրացման պատճառ է դառնում: Դրա արդյունքում հայերի մեջ ընդունված ամուսնական տարիքը 18-22 տարեկանից բարձրացել է մինչև 26-27-ը²:

Վերլուծելով հայկական ժողովրդական սովորության իրավունքի շրջանակներում ամուսնության հիմնահարցը, կարող ենք փաստել, որ վաղ տարիքի ամուսնությունը բավականին տարածված երևույթ էր հատկապես հայ գավառական միջավայրում: Փաստացի Հայոց եկեղեցին, իր մտահոգության սահմաններում ընդգրկելով կյանքի ամենտարբեր խնդիրները, մշտապես անդրադարձել է այս հարցին: Միանշանակ կարող ենք փաստել, որ մեծ է Հայոց եկեղեցու դերակատարությունն ու ազդեցությունը հայ հասարակական կյանքի նույնիսկ ամենաանձնական փոխհարաբերություններում: Եկեղեցին վեր էր կանգնած աշխարհիկ իրականությունից և հասարակական կյանքի բազմաթիվ հիմնախնդիրներ իրենց լուծումն էին գտնում եկեղեցական իրավունքի շրջանակներում: Այդպիսի մի խնդիր էլ վաղ տարիքի ամուսնությունն էր, որի վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ մինչև քաղաքացիական իրավունքի դաշտ մտնելը, այն երկար ժամանակ գտնվել է Հայ Առաքելական եկեղեցու իրավասության ներքո, և ինչին Եկեղեցին մշտապես փորձել է տալ խելամիտ կարգավորում:

¹ Տե՛ս **Ե. Լալայեան.**, Բորչալուի գաւառ, էջ 212-213:

² Տե՛ս **Լ.Վարդանյան,** Հայոց ամուսնա-հարսանեկան ավանդույթների արդի դրսևորումները սոցիալ-մշակութային փոխակերպումների համատեքստում / **Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում,** Երևան, 2010, էջ 335:

Բանալի բառեր - ամուսնություն, չափահասություն, աղջիկ, եկեղեցի, կանոն, ժողովրդական սովորույթ, փոխհամաձայնություն, ավանդույթ, իրավունք:

ВОПРОС О ВОЗРАСТЕ СОВЕРШЕННОЛЕТИЯ В КОНТЕКСТЕ БРАКА

Լիանա Դալլաքյան

Ключевые слова - брак, совершеннолетие, девушка, церковь, канон, народные обычаи, взаимное согласие, традиция, право.

Статья касается вопроса о совершеннолетию брака, а также его церковно-канонических и традиционных проявлений.

Рассматривая каноны относительно совершеннолетия брака, установленные Армянской Апостольской Церковью в разные периоды истории, приходим к выводу, что в армянских традиционных кругах несовершеннолетние браки были довольно распространенной практикой. Осознавая опасность такого опыта с религиозной, физиологической и психологической точек зрения, Армянская Церковь всегда последовательно запрещала и регулировала сохранившиеся до сих пор подобные порочные явления.

THE PROBLEM OF ADOLESCENCE IN THE CONTEXT OF MARRIAGE

Liana Dallakyan

Keywords - marriage, adulthood, girl, church, rule, folk custom, mutual agreement, tradition, law.

The article touched upon the issue of marital adulthood, its ecclesiastical - canonical and customary manifestations.

Analyzing the rules of marriage by the Armenian Apostolic Church at different times, we come to the conclusion that in Armenian customary marriages minor marriages are quite widespread. The Armenian Church, realizing the danger of the mentioned problem from the religious, physiological and psychological points of view, has always consistently banned and regulated those vicious phenomena that are still preserved in everyday life.